ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3399-Ա « 04 » սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի վերաբերյալ» №50-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, ընդհանուր՝ 144000 (մեկ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ արժեքով գույքը (համակարգիչ ամբողջը մեկում), ընտանիքի կենցաղային կարիքների համար օգտագործելու նպատակով, սեփականության իրավունքով անհատույց փոխանցել (նվիրաբերել) սոցիալական աջակցության կարիք ունեցող Մարիամ Պետրոսյանին:
2. Լիազորել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Մարիամ Պետրոսյանի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:
3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի վրա:
4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ